

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտատպանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՈՒՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայն դրամ եռայլն դրկեր հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на ВѢСТНИКЪ
„Ирaвункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր և յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անորոշ-
ովիկ կամ մասամբ:
Խմբագրական տղը 20 սանթիմ. երե-
ֆեկ անկի անգամներու համար 20 օ/Պ
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԱՆԿՐՈՇՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Հակահրօնական գրաւոր և բերա-
նացի բրօքսականտան սկսած է ար-
դէն իր շօշափելի արդիւնքները
տալ մեր մէջ: Այսմ հայ ժողո-
վուրդին մէջ բաւական ստուար է
այն դասակարգը որ հեգնական
ժպիտ մը միայն ունի կրօնական
հաւատալիքներու և եկեղեցւոյ
իբր ճշմարտութիւն ընդունած ըս-
կըզբունքներուն և դաւանութեանց
համար:

Այս դասակարգը կրնանք եր-
կու որոշ մասի բաժնել. մէկը կը
բաղկանայ բոլորովին սոգէտ, դա-
տելու և երբեմն միջին իսկ երկու
կանոնաւոր խօսք իրարու քով բե-
րելու անկարող անձիւրէ, որոնք
սակայն մարդկային իմաստութեան
գերազանց արդիւնքները իւրացու-
ցած ըլլալու յաւակնութեամբ լե-
ցուն, իրենց տգիտութեան բոլոր-
ովին անգիտակից, արգահատելի
արարածներ, իրենց իբր ճշմարտու-
թիւն ընդունած գաղափարները
պաշտպանելու ալ կենդան և այս
դերին մէջ իրենց մտային ու բա-
րոյական պարագայութիւնը այնքան
պայծառ երեւան կուգայ, որ քիչ
մը դատելու վարժ ունենալը իրենց
հանգէպ տպաւորութեանց ամենէն
անճշտութիւն կը մատնուի, արգա-
հատանքի, զայրոյթի և զգուանքի
այլանդակ խառնուրդէ մը պաշար-
ուելով:

Խեղճ մարդը որ բնաւ մտային
զարգացում չէր ունեցեր, վրայ
տուած է նաև այն բարոյական ըս-
կըզբունքներն ու ըմբռնումներ,
զորս երբեմն այնքան սերտիւ ընդ-
գրկած էր կրօնի միջոցաւ և իբր
կրօնի անյեղի, անողոք պատ-
ուէրներ: Զուտ կրօնական հաւա-
տալիքներու հետ բարոյական
պարտքերու գաղափարներն ալ
թօթված, նետած է հիմա իր վը-
րայէն իբր աւելորդ բեռ մը: Ու
այս ամենէն զատ՝ դարձած է նաև
անուղղայ մը, որովհետեւ իր ծայ-
րագոյն իմաստակութեան մէջ, իր
մտային խեղճութեան բոլորովին
անտեղեակ, իր բերնէն ելած ձա-
փառութիւններուն անհերքելի ճշմար-
տութեան վրայ վստահ՝ ոչ առար-

կութիւն կրնաւոր, ոչ ալ խօսք հաս-
կընալու ընդունակ է: Կորսուած է:

Ազատամիտ անկրօններու միւս
մասը քիչ չափ մտային պաշարի
տիրացած է, գիրք կը թղթատէ
ու գրող է: Իր մէջ կան կարող,
դատող, համակրելի տարրեր: Սա-
կայն կրօնական իրերու դատողու-
թեան մէջ ընդհանրապէս անանկ
հովեր կան: Երկար ժամանակ
կային գիտութեան նորագոյն ար-
դիւնքները կրնա՞ն ու մարտած է և
թէ գիտութիւնը արդէն իր վեր-
ջին բաժն ըսած է կրօնի համար:
Երկուքն ալ սխալ է:

Բառին եւրոպական իմաստով
գիտուն կոչուելու արժանի հայեր
տակաւին այնքան ցանցաւ են աշ-
խարհի մէջ որ կարելի է գանձի
մատի վրայ համրել: Սոնք մէկ
կողմ ձգելով, մեր մէջ ամենէն
հմուտ կարծուած անձիւր, շատ շատ,
գիտուններու երկար տարիներ ա-
շակերտելու կարօտ, գիտութեան
սկսնակ սիրողներ են ու հետեւա-
պէս անկարող՝ գիտական վերջին
հետազոտութիւններու ու անձնա-
կան լուրջ և երկարատեւ ուսում
նասիրութեան վրայ հիմնուած վը-
ճիւններ արձակել կրօնի էութեան
դէմ: Քիչ մը փիլիսոփայութեամբ
համեմուած, գիտական հարեւան-
ցի տեղեկութիւններով զարգա-
րուած և ժողովուրդին համար գը-
րուած բանի մը ֆուստական զը-
քերու ընթերցումը բաւական չէ
այդ բանին համար:

Տարվին մը, Հէքլ մը և իրենց
նմաններ միայն կրնան մտիկ ըլ-
լուիլ, երբ կրօնի հակառակ բան
մը կը խօսին:

Ու ասոնց ալ ահագին մեծա-
մասնութիւնը, որուն մէջ Հէլմհոլցի
վիրիսովի և Հիլքսլէյի պէս հը-
զօր իմացականութիւններ, ինք-
զինք անկարող կը դաւանի գիտա-
կան փաստերով հերքելու ինչ որ
կրօնի հիմը, իր էական մասը կը
կազմէ: Ուրիմն գիտութիւնը գեո-
շատ հեռու է իր վիշիլին բաժն տը-
տասանելէ կրօնի նկատմամբ:

Ամեն զարգացած մարդ երբ աշ-
քի առջեւ դնենք զայս, պիտի
զգուշանայ յախուռն քննադատու-
կան գիրք մը բռնելէ կրօնի նը-

կատմամբ և անխնայ հրապարա-
կով հարուածելէ դայն, որով մի-
անգամայն տեղի տուած չըլլար
բազմաւարուն այն խեղճ, իմաս-
տակ անկրօններուն, որոնք, ինչ-
պէս վերն ըսինք, կրօնի հետ բա-
րոյական ալ վրայ կուտան: Ինչ
կը մնայ անդին, բացի ֆիզիքա-
կան մարդէն:

Յ. Պ.

«ՇԱՐԺՈՒՄ» ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Տ. Տիգրան Ճգնաւորեանի և Տ.
Յ. Չաքըրեանի դատը «Շարժու-
մի» դէմ ամսուայ 27 ին տեմնուեցաւ
Վառնայի գաւառային դատարանին
առջեւ:

Տ. Ճգնաւորեան, որուն համար
ըսուած էր թէ փախած է, իր
ճամբորդութիւնը ընդհատելով,
փութացեր էր վառնա վերագաւ-
նալ և դատաւարութեան ներկայ
գտնուիլ, իր մասին չըլող տուա-
ձայնութիւնը իր ներկայութեամբ
հերքելու համար:

Դատաւարութեան սկիզբը՝ դա-
տարանի Տ. Նախագահը յորդոր
կարգաց ամբաստանողներուն և
ամբաստանեալին՝ հաշտուելու և
իրեւ հայրենակից իրենց մէջ բա-
րեկամօրէն վերջ տալու խնդրոյն:

Ամբաստանողները յայտարարե-
ցին թէ կը ցաւին որ անկարող
են ընդունիլ Տ. Նախագահի առա-
ջարկը, խնդրել պատուոյ խնդիր
և հանրային հանգամանք ստացած
ըլլալով:

Հետեւապէս դատաւորները երկու
կողմը լսելէն ետքը, քաշուեցան
խորհրդակցութեան սենեակը ի-
րենց վճիռը տալու համար: Երբ
հրապարակային նստի սրահը վե-
րագարձան, Տ. Նախագահը վը-
ճադիրը կարգալէ տաւ, երկու
հակառակորդ կողմերուն դարձեալ
առաջարկեց հաշտուիլ, ինչ որ ամ-
բաստանողները նորէն մերժեցին
միեւնոյն առարկութեամբ:

Այն տուն Տ. Նախագահը կար-
գաց դատարանին վճիռը որով
«Շարժում»ի նախկին պատասխա-

նատու Տ. Ղալար Թաճմիսեան կը
դատաւարտուէր երկու օրուան
բանտարկութեան և 20 ֆր. տու-
գանքի: Այս պահուն Տ. Տիգրան
Ճգնաւորեան և իրեն հետեւելով
Տ. Չաքըրեան յայտարարեցին թէ
հիմա՝ կը ներեն Տ. Թաճմիսեանի
որուն դէմ անձնական ու է հա-
կաւակութիւն չունէին և կը խնդ-
րեն որ դատարանի վճիռը չի գոր-
ծադրուի ամբաստանեալին վրայ:

Այս յայտարարութիւնը մեծ
գոհունակութիւն պատճառեց թէ
դատաւորներուն և թէ՛ ունեցիկ
ներուն, որովհետեւ ինչպէս յայտ-
նի է, Տ. Թաճմիսեան, թէ և օ-
րինական տեսակէտով միակ պա-
տասխանատու Շարժումի «Հայ
դաւաճան մը» վերնագրով յօ-
դուածին, որ դատին առարկան
էր, սակայն իսկապէս բոլորովին
անմեղ էր, յօդուածը առանց իր
գիտութեան, միայն «Շարժում»ի
խմբագրութեան կողմէն գրուած
ու հրատարակուած ըլլալով:

Տ. Թաճմիսեան փութաց իսկոյն
իր շնորհակալութիւնը յայտնել
Տ. Ճգնաւորեան և Տ. Չաքըրեանի
և այսպէս՝ հակառակորդները իբր
բարեկամներ միասին դուրս ելան
դատաստանի սրահէն:

«ԱՆԱՀԻՏ»

Ս'եր հին, գեղեցիկ Աստուա-
ծուհին աղուոր անունը նուիր-
ուած այս հանգէսին երեւումը ի-
րաւ որ ուրախութեամբ կը լեցնէ
ամեն գրասէր հայու սիրտը:

Անաւիտ՝ ինչպէս ծրագրէն կա-
րելի է հետեւցնել, կոչուած է մեր
ժողովուրդին հոգեկան ընտիր դա-
տիարակութիւն մը տալ, գրակա-
նութեան միջոցով:

Համակրելի հրատարակիչը ար-
դէն ծանօթ է ամենուս իրրեւ գը-
րագէտ-բանաստեղծ մը որուն մըտ-
քի գեղեցիկ արտադրութիւնները
ամանամեծ գնահատութեան ար-
ժանացած են միշտ:

Հիմա նոյնքան ժողովրդական
ու նոյնքան կարող գրիչներ են
զինքը շրջապատող դէմքերն ալ
որոնց հրապուրիչ համախմբումը

ինքնին գրաւական մըն է կատարեալ յաջողութեան :

Անանիտ՝ ինչպէս բանաստեղծ հրատարակիչն ալ կը նկատէ, յարմարագոյն ժամադրաւորը պիտի ըլլայ մեր արեւելեան և արեւմտեան դեռութիւնք աշխարհիկ լեզուն ներկայացնող նշանաւոր հրապարակագիրներուն որոնք շարունակական շփումով մը պիտի կրնան պատկերացնել մեզ միանգամայն թրքահայի և Ռուսահայի ճշգրիտ նկարագիրը :

Հոն պիտի տեսնենք արեւելեան հայը իր կորովի, չղուտ ոգով, ինչպէս նաեւ արեւմտցի հայը իր քնքուշ, ճկուն և շնորհալի լեզուով : Եւ այս երկուքին միացումը պիտի կազմէ իսկապէս զուտ հայկական գրականութիւն մը որ ամեն առաւելութիւն պիտի ունենայ, բնականաբար, լիակատար մեղմութեամբ մը մատակարարելու հայ մտքերուն :

Անանիտի առաջին թիւը՝ իրեն գրական հատընտիր փնջակ մը՝ որքան ալ անսահման գոհացում մը պատճառէ մեզ հարկ է խոստովանել սակայն որ գաղափարական տեսակէտով միջակ տպաւորութեան մը տակ կը թողու ընթերցողը :

Այսու հանգիստ, ամեն իրաւունք ունինք այժմէն հաւատարմութէն Պօլսական մեղկ ու սպանիլ միջնորդաւ հետեւ, տիեզերական քաղաքակիրթ կեդրոնէ մը մեկնած և ամեն դիւրութիւններով օժտուած այդ երջանիկ հանգէսը՝ իր քննելիք անտեսական, ընկերական, գրական բոլոր հարցերուն մէջ պիտի ունենայ միշտ ողջ, գիտական, որոշ ուղղութիւն մը որով պիտի յաջողի հարկաւ մեր իր վրայ դրած բոլոր իրաւացի յոյսերը արգարացնել :

Չօպանեանի «Ծաղիկ»ը՝ ապրիլով կոպիտ գրաքննութեան մը տըլումար սեղմումներուն տակ, թէեւ քիչ մը դժգոյն ու անջիլ, երիտասարդութեան բարձի գիրքը եղաւ սակայն, իր բերթողական

կենդանի շունչով, գողտրիկ ոճով և խնամքոտ ուսումնասիրութիւններով :

Անանիտ՝ զերծ ամեն պրկումէ և կաշկանդումէ, ապահովաբար, ճշմարիտ Բաշխիւր պիտի ըլլայ փրկարար գաղափարներու և, իրեն «Մայր ամենայն զգաստութեանց», ալ աւելի ընդարձակ ծաւալումով մը, շարունակ պիտի գրաւէ ամենուս համակրանքը :

Ուստի չեմքապէս յանձնարարելով վայն ամեն բանիմաց ընթերցողի, բոլոր սրտով կը մաղթենք որ երիտասարդ խմբագրապետը ունենայ իր օգտակար ծրագիրը լիովին իրագործելու ամեն յաջողութիւն :

Վահան Շահիրիսն

ԽԵՂՃ ՇԱԽԱՐԾԻՆ

Պատրիարքարանի պաշտօնէից ստացած պատուանշաններուն առթիւ մեր քննադատութեանց եւ փաստերուն փոխանակ լրջօրէն պատասխանելու, Շախարջ անդամ մ'ալ ելած է իր հոգեւոր պատկերը ցոյց տալու բուն խնդրէն դուրս ելնելով կամ փաստերու առջեւէն փախուտ տալով և անձնականի դէմ անպատկառ հայտնութիւններ ընելով, որոնց պատասխանելու համար մինք չենք կարող իրեն պէս, ազատաբար հրապարակել, զի ատով մեր ուղղութեան եւ հրապարակարգի մը պահանջուած համոտութեան դէմ մեղադրած կըլլանք :

Խնդրէն դուրս կը ձգենք իր անձը որուն մասին հետաքրքիրներ արդէն տեղեկութիւն ունին կամ կրնան հարցնելով շատ բան իմանալ :

Շախարջ յաղթահարուած ու շուարած, մէջտեղ կը հետէ «Իրաւունք»ի խմբագիրներէն միոյն ատենօք պատմաի եւ եւալմաի վաճառականութիւն ալ ըրած ըլլալը իրեն խմբագրի մը համար անպատուաբար մի պարագայ (1900) : Չենք կարող հասկնալ թէ խնդրոյն հետ ինչ յարաբերութիւն ունի անոր երբեմն վաճառական եղած ըլլալը, զոր ընդհակառակը մենք պատուաբար կը նկատենք :

Փանք ուրեմն բուն խնդրոյն : Մենք Պատրիարքարանի չքանչանեալները զաւաճաններ են ըսած չենք, այլ ըսած ենք թէ կրնանք այդ համոզումը գոյացնել : Կրնանք բառին իմաստը հասկնալ պէտք է :

որ ներս կը մտնէր եւ վայրկեանապէս մեզ դուրս ելլել կը հրամայէր. զի այդ էր հազարապետ Օսման աղայի հրամանը, որ դուրսը մտնակ ի ձեռքին պանդոկապետէն ուտելիքներ կը պահանջէր : Հայհոնելով եւ մտրակի հարուածներ տալով : Թիւրք գիւղացիները հառաւ մը պէս դուրս թողնելով ոստիկանի առաջին հրամանէն դուրսը ծածքին տակ շարունակ պանդոկապետի աղաչանքները եւ հազարապետին մտրակի ելելէջները կը գիտէին : Իսկ մենք ներսը իրարու երես կը նայէինք, կողոպտուելու վրտանպէն աղատած, բայց միեւնոյն փամանակ տարբեր փորձութեան մը մէջ ինկած :

Ոստիկանի հրամանը պէտք էր կատարել, եթէ կուզէինք մեր կաշին ազատել եւ դուրս ելլել ստիպուած էինք : Բայց ո՞ր երթալ կէտ գիշերուան մօտ, այդ էր կարեւոր հարցը : Պանդոկի մնացեալ մասը փլած էր. ու միայն ծանօթ սենեակէն ու ախոռէն գտնուելու տեղ չկար : Ախոռը ծայրէ թծայր կենդանիներով լեցուած էր : Սուրին

Ս. Իգմիրլիանի չքանչան եւ նոյն իսկ զրամական խոշոր նուէրներ առաջարկուած ու անոր մերժած լինելն ժամանակին օտար թերթերն ալ գրեցին ու ծափահարեցին : Եթէ նոյն իսկ այդ սուտ ըլլայ, մենք սկզբունքն է որ մէջտեղ կը բերենք եւ որ ծափահարուած է :

Թուրքը Պուլկար վարդապետներուն չքանչան տալով ինք կը քննէր Պուլկար ազգին բարեկամութիւնը շահելու համար. իսկ մեր Պատրիարքարանի պաշտօնեայինը իրենց քննութիւնով ու գիտնականով այդ նշանները կ'ըստանան, ինչ որ այսօր ապացուցուած է եւ Շախարջ ալ խոստովանած թէ՝ «յարմար առթիւ մը եղած բարեխօսութեան մը արդիւնք են այդ պատուանշաններն» : Հետեւաբար այս անհուն տարբերութիւնը պէտք է նկատի առնել, երբ կը տեսնենք թէ պուլկար կղերը իր ազգի քառօրէ դարու վրէժը յիշելով իր առջեւ քննող թուրքը եւ անոր նուէրը մերժումով մը կ'անարգէ. իսկ հայ կղերը ու իր նշխարայ պաշտօնեայինը կ'երթան կը խոնարհին, կը քննին մեր եղբայր տաք արիւնով դեռ նոր ներկուած թուրքին ոտքերուն առջեւ իւր զրկելով որ իրենց նշաններ արտին : Ահա այս ստորագրումը Բիզանդիոն եւ Շախարջ կը ծափահարեն, առանց խցի խաթի :

Թուրք գրաքննութիւնը կը ճանչնանք. բայց Բիզանդիոն անոր պահանջէն շատ աւելի առաջ կ'անցնի եւ ինքնաբերաբար կը դրուածէ ու կը գովէ այն ազգայնաւ հանգամանքները, որոնց համար թուրք գրաքննութիւնը միայն լռութիւն կը պահանջէր : Սա երբեք չէր կարող պահանջել որ այդ առթիւ «Բիզանդիոն» ներքողներ յօրինէ :

Արտասահման գտնուող հայ վաճառականներէն ոմանց թուրք բանակին ի նպաստ հանգանակութեան մասնակցելն մենք մեղադրած էինք եւ Շախարջն ալ չարաչար հարուածած էր «Իրաւունք»ի այս սխեմաներուն մէջ. կ'երեւայ թէ խեղճուկը այն ատեն չի գիտեր եղբւր թէ՝ մասնակցող վաճառականները որոնք էին եւ ինչ հանգամանաց տակ կը գտնուէին. ուստի սեմ իրեն : Այդ մասնակցողները Պօլիս բնակող հայ վաճառականաց արտասահմանի մասնաձիւղերն էին եւ թուրք հիւպատոսները անձամբ եւ քրտնութեամբ կու գային ոլորում թիւն խնդրելու անոնցմէ. հասկնուցի՞նք : Ուրեմն, ինչ՞ ձ մարդ, այն ատեն չի հասկցած բանիդ ինչպէս կար հայտնեցիր :

Բայց ինչո՞ւ զարմանալ. երբ գիտենք

ծայրովը սենեակէն դուրս վտարուած մենք ալ մեր կարգին շարուած էինք թիւրք գիւղացիներուն քով ձիւնին եւ փութին հանդէպ : Հազարապետը ճարճատուն կրակին դէմ բաղած իր սիկատնիկը կը ծխէր ամենայն դոհուտար, պանդոկապետը դէմը բարեւի կեցած էր. իսկ մենք դուրսը, ձիւնին տակ կը դողդղայինք առանց փութի ճիկ մը հանելու քաջութիւնը ունենալու : հազար երանի կուտայինք ախոռի կենդանիներուն, որոնք վերջապէս ծածքի մը տակ էին. թիւրք գիւղացիները իրենց գաւթէն կը զրգոհէին, բաղդը այնպէս բերած էր, ինչ ընելու էին. կարելի՞ էր միթէ Սուլթանին անիրաւ պաշտօնէին դաս տալ. որ բնաւ չմոռնար եւ յիշատակ մնար իրեն : Թուրք պաշտօնեան ամեն ինչ է ճաճկաստանի մէջ եւ իրաւունք ունի իր խելագատակէն փրչան ընելու առանց պատմութեւ պախը ունենալու :

Պարտաւորած էինք շարունակ շար-

թէ հայտնութեանց զատ բան չես կարող գրել :

Շախարջ՝ որ իր կենաց մէջ ոչ ոքի արժանապատուութիւն չէ յարգած, կ'ելլայ անձնական արժանապատուութեան խօսքեր ալ կը մոռնայ, ճիշդ այն անկուտիին նման որ քունին մէջ չունեցած ոսկիները կ'երազէ :

ԱԼՄԱՆԻՍԻ ՎԻԼՀԷԼԻՄ ԿԱՅՍՐԱՐՉ

ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ

ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐԸ

Սեւաֆօրի Կ. Պօլսի թղթակիցը գրած է հետեւեալը.

«Վիլհելմ կայսրի Կ. Պօլիս բնակութեան նախնական ծրագրին մէջ այս ալ կար որ կայսրն իր ներկայութեան պիտի ընդունէր պատրիարքներն եւ ոչ մասնական հասարակութիւնների հոգեւոր պետերն ալ : Այդ ընդունելու թիւն չեղաւ, հաւանօրէն Յայնրիխ Կիլերսկան պատրիարքի մերժելովը : Մինչդեռ Յունաստանի դեսպան Տ. Մալքոբօրտաթօ, հելլենաթիւրքական դաշնակցութեան կուսակիցներէ մին, խորհուրդ կուտար պատրիարքին որ անպատճառ ինք ալ երթայ կայսրին այցելութիւն մը տայ եւ Մեն եկեղեցիին անոր համար բարեմաղթութիւնները ներկայացունէ, միւս կողմէ ալ ուսական դեսպան Տ. Ջիւնովիլ կ'իմացունէր Կոստանդին Ե.ին թէ իր կատարելութիւն լաւ աչքով չպիտի նայի Արեւելեան եկեղեցիի ծայրագոյն պետին երթալ Ալմանիաի կայսր յարգանքներ մատուցանելուն վրայ : Ս. Սիւնոյը ու չալլուութեան առնելով խնդիրը, որոշեց թէ՝ նորին Արքեպիսկոպոս չկրնար առաջ ինք այցելութեան երթալ վիլհելմ կայսրին. ո՞ր կը մնայ որ կայսրն անձամբ չպիտի փոխադարձէ այդ այցելութիւն, հապա իր չքախուսէ մէջ կը իր կողմէ պատրիարքարան պիտի զրկէ :

Հայերի պատրիարքն երբ իմացաւ Ֆէյէրի պատրիարքարանի որոշումը, ինք ալ որոշեց միեւնոյն կերպով վարուել — թէեւ ինք կրօնական միեւնոյն հանգամանքներ մէջ չգտնուէր որովհետեւ ինք Գրիգորեան եկեղեցիի ծայրագոյն պատրիարքը չէ — : Այս ալ ուրեմն մի պատրիարք եղաւ Կայսրին համար որ Արեւելքի բոլոր քրիստոնեաների պաշտպանի դերը ունենալ կը կարծէր :

Առեւելիս

Ժիլ չառնելու համար, եւ անկարելի է նկարագրել այն վիշտերը, զորս կրեցինք այդ գիշերը մարդանման հազարապետի մը հանգստութեան համար : Առտուն շատ կանուխ ճամբայ ելանք այդ խեղճ գրութիւնէն աղատելու համար. ձիւնի գողերը մեզմէ յառաջ ելած էին իրենց թաքստոցներէն. վաճառականի բեռներ կային մեր հետ, ստակալի մուր էր, Աղամալ մուր էր, որ կը պատէ արալայսէն յառաջ. իրարանցում մը սկսաւ ջորիներուն եւ ջորեպաններուն միջեւ, աղմուկ մը եւ խեղդուկ ձայնք, իրարմէ անտեղեկ էինք. եւ չէինք գիտեր թէ ինչ կանցնի կը զառնայ քիչ մը հետեւ. վառման մէջ լուսցուցած էինք, ջորիի մը բեռ ճեղքուած եւ մէջի ապրանքը զոցուած էր եւ ջորեպան մը վերաւորած : Իսկ քիչ մը անդին մեր ծանօթ հերոս Հազարապետը իր առաւանստն քունը կը խոկար ամենայն անտարբերութեամբ ու անհոգութեամբ : Մ. Գրքունի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ, հոկտ. 1898

Բարիկը «Սէն Տէնի»-ի լատին եկեղեցին, ուր կը հանգչի Լուսինեան Լեւոն Զ. այսօր ժամադրովայր մը դարձած էր բաւական թուով բարեկարգակ ազգայնոց, որ եկած էին իրենց յարգանաց խոնկը մատուցանել հայկական վերջի թագաւորին նշխարաց, հանգուցելոյ մահուան տարեգարձին առթիւ։ Ի գլուխ խնկարկուաց կը գտնուէր երջանկայիշատակ խորէն Արքեպիսկոպոս Նարպէյի մեծա-յարգ եղբայր իշխան Ա. Լուսինեան։ Այս տարեգարձ ճիշդ վիճակէ մէջ Երուսաղէմ մտնելու օրը տեղի կունենար, այս զուգահեռ պոթիւնը նիւթ ունենալով՝ հայ ատենաբան մը մի քանի յուզիչ խօսքեր ըրաւ։

Այսօր հոս հասած հեռագիրներ կիմացնեն թէ Գերման կայսրը հայ յոյն և լատին պատրիարքներն հիւպատոսարանին մէջ իւր ներկայութեան ընդունելով, այս միջոցին լատինաց Պատրիարքին «կարմիր Արծիւ» պատուանշանին Ա. աստիճանը, Գրեկաց Պատրիարքին «Թագ» պատուանշանին ականակուռ Ա. աստիճանը, իսկ հայոց Պատրիարքին «Թագ» պատուանշանին Ա. աստիճանը շնորհեց։ Ինչպէս կը տեսնուի լատինաց Պատրիարքին ամենէն բարձր պատուանշանն է։ Գրեկաց Պատրիարքինը ականակուռ ըլլալով ու պատրիարքաց երեցը լինելուն իրաւամբ կը տարբերի հայոցինէն։ Բայց լատինաց Պատրիարքին ամենէն բարձր աստիճանը տրուելը թէ և անիրաւ է, սակայն ծանօթ քաղաքական պատճառներու արդիւնք ըլլալը ակնհայտ է։

Փ. Պոլիս, 22/3 հոկտ. 98

Անցեալ կիրակի՝ հոկտ. 19ին, տեղւոյս հայկական խորանին մէջ Գ. Ասքանազ Մեյրանեանի մէկ յուզիչ և ազգու ատենախօսութիւնը լսելու բազմ ունեցանք։

Հանդիսավայրը երկուսու հոծ բազմութեամբ լեցուած էր, Լեւսարանական վարչութիւն նախապէս իր սովորութեան համաձայն ազգարարած ըլլալուն համար։

Ատենախօսութեան նիւթն էր յեղափոխութիւնը, իր հագոյնը և արդիւնքը։

Նիւթի շահեկանութիւնը չէր միայն որ կը հետաքրքրէր հանդիսականները, այլ նաև նորեկ Պարոնի ճարտասանական խօսքերը, որոնք նախորդ կիրակուան վիճաբանական ժողովին մէջ այնչափ բուռն համակրանաց և ծափահարութեանց արժանացան։

Ատենախօսը ժամի մը չափ խօսեցաւ շատ լաւ և փաստացի կերպով ցոյց տալով յեղափոխութեան ծագումը՝ որ բռնութեան, զրկանաց, հարստահարութեանց և ան-

զըթութեանց անխուսափելի արդիւնքն է, և ներկայ դարուս մէջ ազատութեամբ շատ մը ազգերու պատմութիւնը յառաջ բերելով ցոյց տուաւ թէ իրենց յաջողութեան պայմաններն էին ժողովրդի զարգացումը, ինքնաշնչանալը և զիրար հիմնականցումը, զաղախարակցական միութիւնը և մասնաւորապէս քիմ ուժի գոյացումը։

Հայկական յեղափոխութեան շարժումները թուելով ցոյց տուաւ թէ իրաւացի է մեր արածը, և անյաջողութեան պատճառները յառաջ բերելով անոնց որ զլիսաւորաբար անձնական ոգեւորութեամբ և մանաւանդ անպատեհ ցոյցներն էին որոնք ժողովուրդը չէր կրնար հեղեղին մէջ թաղելով՝ յոռետեսութեամբ ազգային բոլոր նիւթական ու բարոյական գոհութեանց առաջն առին։ Յուսահատներուն և դատարկներուն գլուխուն վրայ անէճք թափելով, Հայաստանի փրկութեան և հայ ազգի գոյութեան միակ միջոցն ու ճանապարհը յեղափոխութիւնն ցոյց տուաւ, ուր ալ որ գտնուէին և ինչ դատարկարգի որ պատկանէին։ Տգիտութեան բարձր, գալոց, մամուլ, լսարան և գրադարան, ինչպէս նաև իրական սեռի մասնակցութիւնն ու աշակցութիւնն իր զարթոնութեան յաղթանակին առնամանակ կուտաններն են։ Այսինքն ոգիւ որութեամբ՝ գաղթականներ իրենց հայրենիք վերադառնալու շեշտեց ցոյցներով թէ հայ զիւղացին այդ ամենա անտանելի դրութեամբ իսկ պարտաւոր է նախընտրել իր հայրենի հողին վրայ մեռնել պապինական օձախին շուրջը քան թէ վարել այստեղի փափուկ, ալ սակայն տաժանելի և անմխիթար կեանքը։

Ատենախօսը ազգու խօսքերով ցոյց տուաւ թէ ապագայի մէջ պէտք է մեզ համար, և թէ սա այն ժամանակ կը յաջողի անպայման, երբ հայ յեղափոխութիւնը անցնալի դառն փորձառութեանն օգտուելով՝ ներկայի ու ապագայի մէջ ժողովուրդը զարգացնելու, ինքնաշնչանալութեան ըզգացումն արժարձելու և մանաւանդ ներքին ուժ գոյացնելու գաղափարն նախընտրէ։

Վերջացնելով իւր խօսքն ցոյց տուաւ թէ յեղափոխութեան արդիւնքով և վառ գոյներով արտայայտեց իւր գաղափարը՝ որին ներկայը երեցս բուռն ծափահարութեամբ իրենց հաւանութիւնն ու համակրութիւնն արտայայտե-

«Յեղափոխութիւն այժմ, և յեղափոխութիւն յաւիտեան պէտք է լինի բոլոր հայերիս նշանաբանը՝ իսկ անկախ հայաստան մը հիմնելը մեր բոլորին իտեալը»։

Ատենախօսը շատ յուզիչ շեշտերով և վառ գոյներով արտայայտեց իւր գաղափարը՝ որին ներկայը երեցս բուռն ծափահարութեամբ իրենց հաւանութիւնն ու համակրութիւնն արտայայտե-

ցին շերմապէս, և շատ գոհ ու զգածեալ սրտով բաժնուեցան Լեւսարանէն։

Սիսակ

ԼՐԱՔԱՂ

Շէրիի դատարանը Գարակէօզեանի կտակին խնդրոյն համար վերջին կոչնագիրը զրկած է Գրեկորէֆ. Գարակէօզեանի. բայց այս վերջինը կը ջանայ ցանձաւ ժողովին միջոցաւ Պատրիարքարանի հետ վերջնականապէս գործը լծնցնել ու իսկաւ թուղթ մը առնել, սա իմաստով թէ Տիգրանէֆի կտակին համեմատ Ազգն իր բաժինն ընդունած է լիովին. և ալ պահանջ չունի նոյն հաշիւէն։ Այս իսկաւ իր փոխարէն, Գրեկորէֆ. մուհակ մը պիտի տայ թէ՛ Հիւանդանոցի անտուկէն փոխ առած է 20 հազար ոսկի, զոր մինչեւ մէկ տարի պիտի վճարէ։

Բայց այս ձեւակերպութեան դէմ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը կառարկէ թէ մինչև որ գոնէ մէկ ժամուան համար այս 20000 ոսկին իր անտուկը չի մտնէ, գործը օրէնքի առջև վաւերացանալու չունենար, որովհետեւ Գրեկորէֆ. կարող է տարի մը ետքը հարցնել թէ «իրեն իրօք 20000 ոսկի վճարող եղաւ»։

Վերջապէս, ինչպէս կերեւայ, Գարակէօզեան ժառանգորդք Ազգին փարա մը չի տուած կուզեն ան. գործադիր առնել, որով կարենան Շէրիի դատարանի վճռէն խուսափել. Պատրիարքարանն ալ, կարծես միայն այս նպատակաւ, փութկոտ գործունէութիւն մը ցոյց կուտայ։

— Կիմանանք թէ կալացի Արժ. Տէր Ղուռնդ հայրը կը պատրաստէ 1899 տարուայ Տարեցոյցը աւելի ընդարձակ և պատկերազարդ քան նախորդները, և նոյնմբերի վերջերը իւրաքանչեւ ընծայէ։

— Կ'ըսուի թէ ընդհանուր կովկասի մէջ դպրոցական նոր դրութեան բերմամբ զբաւուած ազգային կալուածներուն արժէքը հինգ միլիոն ռուպլիէ աւելի է. որ ըսել է առաւել քան 13,000,000 ֆրանք։

— Ս. Պատրիարքը անցեալ Եւօրալ Եւրոպայի պալատը երթալով տեսակցած է Ա. քարտուղար Թաշսին պէյի հետ. անշուշտ կրկին կայսերական մեծ շնորհ մը ձեռք պիտի ձգէ («»)։

— Զմիւռնիոյ երկուսու որբանոցներուն մէջ որբերու թիւը կը հասնի մօտ 100-ի, որոնց մէկ մասը որդեգրուած են և մնացեալ մասը հասարակութեան նպաստին կարօտ. այս վերջիններուն ինպատակ պարահանդէսներ, ցուցահանդէսներ և թատրոններ կը կազմակերպուին Զմիւռնիոյ մէջ։

— Ն. Պոլսոյ կրօն. ժողովը վերջնականապէս որոշած է հայ. եկեղեցւոյ գիրկն ընդունել և մկրտել

Անժէլ և Սուրէ Պլաք հրէուհիներն։

— Էջմիածնայ Ս. Սինօդի միջոցաւ հաւաքուած ու բաշխուած ներպատեներու գումարը 30,000 ոսկի կը հասնի։

— Ազգ. Հիւանդանոցին ինպատակ Պոլսոյ բարեկեցիկ ընտանեաց մէջ հաստատուած գանձանակներէն 100 ոսկիի չափ գումար մը գոյացած է։

— Դերասանապետ Տիար Ֆառուհաճեան Սլիվէնէ մասնաւոր նամակով մը մեզ կ'իմացնէ թէ՛ իր առողջութիւնը ըստ բաւականի բարւոքած է ի շնորհս Այտոսի հարցաքննիչ դատաւոր Տ. Բէթ. րաքի Շորքիի դրամական նպաստներուն ու Տօքթօր Նիքոլովի խնամքներուն. նաև Պագլաեան և Արմաղանեան ընտանեաց հոգածութիւնը երախտագիտութեամբ կը յիշէ։

Տիար Ֆառուհաճեան օգափոխութեան համար Այտոսէն Սլիվէն փոխադրուած ըլլալով, Տիար Տօքթ. Օրմանյանի խնամքը, և Տ. Արմեանակ և Սիհրան համաձայնեաներու հոգածութիւնը վայելելուն առթիւ կը խնդրէ հրապարակաւ իր շնորհակալութիւնը յայտնել։

Վառնայի մէջ իրեն ինպատակ կազմակերպուած թատերականներ. կայացումի մասին ալ իր շնորհակալքը յայտնելով միատեղ կը յաւելու թէ՛ իրեն միայն 5 1/2 լէվ զրկուած է («»)։

Նոր-Դարի մէջ կը կարգանք։

Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ վեհափառ Հայրապետը մըտադիր է այս ձմեռ Թիֆլիսում անցկացնելու։ Հաւանական է, որ Նորին Վեհափառութիւնը Թիֆ. ճանապարհովի գեկտեմբերի սկիզբներին։

— Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ առաջիկայ կիրակի, հոկտեմբերի 25ին, եպիսկոպոս են ձեռնադրուելու Գարեգին վարդ. Սաթուհեանը, Յովհաննէս վարդ. Շիրակունին, Յուսիկ վարդ. Տէր Մովսիսեանը և Աշոտ վարդ. Շախեանը, որոնց ձեռնադրութիւնը տեղի պիտի ունենար Ասլանեան և Ճէվահիրճեան եպիսկոպոսների ձեռնադրութեան հետ, բայց յետագուել էր։

Թիւրքիայից արդէն Ս. Էջմիածին են հասել Գէորգ Իւթիւճեան և Յովոր Աշոտեան վարդապետները, որոնք նոյնպէս եպիսկոպոս պիտի ձեռնադրուին յիշեալ օրը։

Կ. Պոլսից Ս. Էջմիածին են գալիս կեսաբիոյ առաջնորդ Տրդատ վարդապետը և երկու ուրիշ վարդապետ նոյնպէս եպիսկոպոսանալու։

Այսպիսով նոր եպիսկոպոսներ կը ձեռնադրուեն 9 վարդապետ, չորսը—Ս. Էջմիածնի միաբանութիւնից և հինգը Թիւրքիայից։

II

Միւրեթիպիւմիւրեթիպ (գրաշար) նախնական խառնածախարակ սեպեպի իւր չարանապա կիւնիւ կազմեթամըլ նէշը օլընմամըլ տըր :

ԹԱՏՐՈՆ

Այս երեկոյ թատերական ներկայացումը պիտի տրուի վառնայի նորակազմ Բնթերցասիրաց Բնկերութեան կողմանէ Սաէտի նէնիէ սրահին մէջ ի նպաստ վերաբացուելիք ընթերցարանին :

Պիտի ներկայացուի ԳԱՅԼ ՎԱՆՆ ազգային թատերախաղը 5 արար և 1 պատկեր, յիտայ զաւելտ մը :

Յուսալիր եմք թէ քաղաքիս հայ հասարակութիւն չի զանաւոր տալ իւր քաջալերութիւն այս նորածիլ ընկերութեան :

ԻՄԲԵՐԱԹՕՐ ՎԻՆՆԵԼՄԻՆ

ՍԷՅԱՆԱԹԸ

Իմբերաթօր վիճակին սէյա հաթտա պուլընմասը, եագըն կիւն, լէրտէ մուհարէպէ գօրգուսը օլմատըղընա պիր տէլիլ տատ օլընմագտա իքէն, սօն կիւնլէրտէ ալընան մալիւմաթ իւղըն, իմբերաթօր սէյահաթընը զըսա պաղլալուպ, մուգատտէս մահէլլէրին հէր ճիհէթինի կէզմէքսիզին վազըթ էվիլէ Պէրլինէ ավտէթ իթմէք թէլաշընտա պուլընտըղը անլաշըլիօր. Երիքովա կիթմէյուպ վէ Սուրիայը թէքմիլ կէզմէսիզին բաթթաթընա ավտէթ իտէճէք տիր :

Պազը զաննիյաթա կէօրէ, Ֆաշօտա մէսէլէսինտէն տօլայը Ֆրանսա վէ ինկիլթէրա պէյնիտէ միւշըլիւթ վար իքէն, Բուսիա տալի ինկիլթէրի Մըսըրտան չըգարմագ մէսէլէսինտէ. Ֆրանսանըն թարաֆընը թուլթագ նիյէթինտէ օլմաղլէ, ումում էվրօրա բօլիթիգասը պիր կէրկինլէք քէսպ իտէճէկի մէմուլ օլընըյօր : Իշթէ պու սէպէպլէրլէ Ալմանիա իմբէրաթօրը պիր սաաթ էվիլէ Պէրլինտէ պուլընմասընը թէրճիհ իթմիշ տիր : Մատրիտտէն քէլիտէ օլընան պիր թէլէկրաֆա պինանէ, իմբերաթօր վէ զէվճէսի նոյեմը. Տաէ Գատիքսէ եթթիշէճէքլէր :

— Իմբերաթօր Երուսաղէմտէ իսլամլարըն ճամիսինի զիյարէթ իթմէսինտէ, իմամլար կիպի պաշընա սարըզ չէքլինտէ պիր քէֆիյէ պաղլամըլ օլտըղընը կազէթալար եագըլօր :

ԿԻՐԻՏ

Բէք չօգ սէնլէրաէն պէրու գալար պուլուտլար ալթընտա զարգ

օլընմըլ օլտն չու պէտպալտա աւտա պու կիւն մէսուտիյէթ թարի. իննէ գատէմ պատմըլ օլտրաղ, մէլքիւր պուլուտլարըն բէյաթիլի տաղլուպ, սէրպէստիյէթ շապէքընա նայիլ օլմապտա պուլընտըղըն պիզ տալի մէսէրլէթլէ սէյու թէլմաշէ իթմէքաէլիլ :

Սօն կիւնլէրտէ ալընան թէլէկրաֆլարը պուլաւտա մուլթուսալէն տէրճ իտէրիլ :

Սթանպօլ 25 Հոկտ. — Թիւրք ասքէրլէր չէթիլտիլէր. եալընըլ Գանտիատա 150 ասքէր գալտը, պուլընտէ աճէլէ վարօրա պինէճէքլէր : Մէսուլաթա կէօրէ Կիրիտտէ թիւրք պալաղընը մուհաֆապ իթմէք իչիւն տէվլէթլէր պիր ալալ թիւրք ասքէրի գալմասընը մէպտէն գապուլ իթմիշլէր :

Գաննիս, 25 Հոկտ. — Մաքինասըլ պիր թիւրք վարօրը ասքէրլէրլէ Իզգէտաին գալէսի էօնիւնտէ իքէն Խրիսթիյան ասըլար անը թօրա թուլթալար վէ Իթալիա զըրլընը եթթիշուպ, թիւրք վարօրընը գուրթարտը : Թիւրք բօսթալը վէ թէլէկրաֆը լազլ օլընտը :

Գաննիս, 27 Հոկտ. — Ինկիլթէր Գանտիատա տիւն ազաւմ 5 միւսիման աստըլար : Բէթիմօտա Բուս ամիրալը ճէպրէն թիւրք ասքէրլէրի չըգարմագտա օլուպ, եալընըլ 4 զապիթ վէ 20 նէֆէր գալմըլ տըր. պու սէպէպտէն իսլամլարտա հէյէճան հասըլ օլմըլ տըր : Պուլտան տօլայը Երաղըտա պիր բօսթէսթիմա մէ հազըրլանմագտա ըմըլ :

Թիւրք ասքէրլէրի իլէ Կիրիտտէն չըգազ իչիւն Իսմայիլ բաշա էմիր ալտը : Ամիրալար Շաքիր բաշայա պիր իւլթիմաթմ եօլլայուպ, նոյեմբը 3 է գատար թիւրք պալաղընը, ասքէրլէրին վէ ժանտարմալարըն քիտիլլէն աստան տըլարը չըգալարընը թալէպ իթմիլէր. աստաւա գալան էլիա վէ մուհիմմաթլարընը ամիրալար մուհաֆապ իտէճէքլէր :

ՄԻԻԹԵՆՆԵՎ ՎԻԵ

Անարշիսթլէրէ գարըլ թէճէմ միւ օլընմագ գօնֆէրանա նոյիմ. 24տէ աշըլաճաղը Բուստան պիլտիրիլմիշ տիր, իթալիա հիւքիւմէթի պու պապտա գօնֆէրանսա պէշ թէքլիթ իրտտ իտէճէք, պուլըլար էվիլէտէն տէվլէթլէրին պիր գըսմընտան գապուլ օլընմըլ ըտը :

— Ֆրանսա տէվլէթի Պահրը Սէֆիտ տօնանմալարըն իւք իշտրէթտէ հարէքէթ իտէպիլմէք իչիւն հազըր պուլընմալարընա էմը վէրմիշ, վէ ամիրալ Ֆուրնիէ Բարիստէն հարէքէթ իթմիշ տիր :

— Կիրիտին թիւրքիա էլինտէն չըգաւսը սէպէպլէ Սթանպօլտա վիւքէլանըն տէկիլիլմէսի պէքլէնիլիօր :

— Բարիս կազէթալարըն պէյանընա նազարէն, մէճիսի մէպուսան Ֆաշօտա մէսէլէսինտէն տօլայը ուղըն մուգաշօտայա կիրիշմէյուպ, իշի թաթլը եթրինէ պաղլամայա չալըշաճագ. կազէթալար մէպտ պարա տալի պու նասաշտ. թը վէրմէքտէ վէ ինկիլթէրանըն հազըրըղը եալընըլ Ֆրանսա իչիւն օլմալուպ, իլլա պիլթիւն լիլրոթայը թէհտիտ իթմէք նիյէթինէ մէպնի օլտըղընը եաղըլօրլար :

— Երուսաղէմըն հէյիէթի վիւքէլտընըն թէքլիլի Գրու Մ. Զայմիսէ իհալէ իթմիշ տիր :

— Սուլթան հիւքիւմալարա մախսուս հէնի իհտաւ իթմիլի Սի օսմանն Նիշանընտան պիրինի հէյիէթի մախսուսէ իլէ Զարա կէօնտէլէքտէ տիր :

— Կիրիտտէն կիտէն թիւրք ասքէրլէրին էքսէրիսի Գօսօվա վիւլայէթինէ կէօնտէրիլմիշ վէ իքինճի վէ իւչիւնճիւ օրտուլարա իլա. վէթէն 250 թապուր հաղըրլանմա. սընա էմիր վէրիլմիշ :

— Բարիստէ մահէթմէի թէմիլի Տրէյֆիւսին տալմասընը պազմագտա օլուպ, սապըզ հարպիյէ նա. զըրլարըլ ժէնէրալ Մէրսիլի վէ Գալէնեագը իսթինթագ իթմէքտէ տիր. պուլընըն իֆատէլէրի վէ եթի էլէ կէչէն էվրաղլարըն միւնտէրիճաթը սըրը սագլանմագտա տըր :

Տրէյֆիւսին մահէթմիլիլինէ պաշընա սէպէպ օլտն պօրտըրօնըն եաղընընա թըպըզ օլտն պիր մէքթուպ լաթէրհաղիտէն թուլթուլմըլ տըր :

— Գուրիէ տէ Պալգանըն ըՍ. թանպօլտան ալտըղը խուսուսի պիր թէլէկրաֆա կէօրէ, Սուլթան բրէնա Եօրկինին Կիրիտէ վալի թային օլընմագ թէքլիթինի գապուլ իթմիշ վէ պու եօլլէ Զալըն արղուսընա միւլթապագաթ էլլէմիշ տիր :

— Թալմըն Սթանպօլտան ալտըղը մալիւմաթ իւղըն, Սըրպ էլչիսի Պապը Ալիյէ պիր նօթա վէ. ըուպ, Ալմապուտըղտա սըրպալըն հալի էրմէնիլէրին Քիւրտլէրտէն չէքմէքտէ օլտըղը գուլմար տէրէճէսինտէ կէօսթէրուպ, Արնապուտարըն թէէտիպ ու թէրպիյէսի իչիւն թէքլիլ օլընմագ գօմիսիօնըն եարընը թիւրք, եալընը խրիսթիան աղալարտան միւլըքէպ օլմասընը թալէպ իթմիշ, վէ էկէր Պապը Ալի պու թէքլիթի գապուլ իթմէլ իսէ, իքի տէվլէթ պէյնիտէ միւնասէպաթը տօս. թանէ միւնգաթի օլաճաղընը գալթին պիլտիրմիշ տիր :

Իքինճի վէ իւչիւնճի օրտուլարա իլալմէթէն 250 թապուր հաղըրլանմագ իչիւն վէրիլէն էմիր պու նօթանըն թէէսիրիստէն հուսուպ կէլմիշ օլմասը մէմուլիլմիշ տիր :

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Յ. Գ. Գիւսիսիլ. — Զեր նամակը եւ 3 Ֆըանքիոց լարգան ստացանք. իմքագրութիւնս երգարարէ զատ ուրիշ գիրք չի ծախիր. ուստի ձեզ պէտք եղած զրքերը ստանալու համար գիւսիլու էք առ Տիար Ա. Զարպիսանլիան ի վառնա :

— Տ. Ս. Բախալիւրէշ. — Զեր 20/1 հոկտ. նամակն ընդունած եմք :

— Դ. Ս. Լօֆչա. Սեպտ. 24 թուականի նամակը ստացած ենք :

— Վ. Խ. Վիսիւ. Կը պարտիք անցեալ տարւոյ համար 6 ֆր. եւ ներկային համար 10 ֆր.

ԶԱՄԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա, 31 Հոկտեմբեր

Պուլտայ
Վալիւն, իւպրա 55-58 հէք 9. 9. 50 ֆր.
Արապա 55-60 հէք 9. 9-12
Արապ
Իւպրա 42-50 հէք 5. 80-6. 20 ֆր.
Ֆաուսիս
100 օգ. 18-22 ֆր. մալընա կէօրէ
Եուրաթ
Արապա 20-25. ֆիյաթ 5. 40-5. 70 ֆր.
Տարր
Արապա 5-6. իւպրա 58-60. ֆի. 4. 60-5.
Մարր
55-58 իւպրա. ֆիյ 6. 80- 7.
Կիւնտէ 150-200 արապա վէ 25-30
վալիս պուլտայ, 70-80 արապա արապ կէլմէքտէ տիր
Ֆաուսիս 8-10 արապա
Արապա մուսթէլէսի նաթօլէօն 21 ֆր.
հաապը իլէ :

ՅԻԿԻԼԵՐ ԵՒ ԲԷԹԷՆԵԱՆ

Յաննանկատարքի Ռոշաճոք

Պատիւ ունին ծանուցանել թէ Դիւրամատչիլի պայմաններով կը հայթայթեն երկրագործական մեքենաներ, գաշնակներ, շաղաքի ամեն տեսակ գործիք և պիտուք, մանիֆաթուրայի և կալանթէրիայի վերաբերեալ ապրանքներ, եւն :

Ամեն կարգի և ամեն տեսակ ընտիր ապրանքներ ուրիշի հաշտոյն համար բերել կուտան ուղղակի եւ րոպական առաջնակարգ գործաւաններէ շատ չափաւոր գիներով, իրենց դիմողը գոհ պիտի մնայ. 2—5

ԱԶԴ

Պուլտարական կիմնապիտէն երրորդ կարգը աւարտած և կրկնատմարի ձեւով տետրակ բանկու վարժ Եւսիպի հայ երիտասարդ մը կը փափաքի վաճառուտան մը մէջ համաստ վարձքով պաշտօն մը ստաննել :

Դիմել իրաւունքի խմբագրատունը :

ՍՈՒՅԻՍ ԻԼԱՆ

ԱՐԹԷՉ ԳՈՒՅՈՒՍԸ

Պագճէ, աշխանէ վէ սայիր հէր պիր մահէլտէ, հէր նէ տէրինլիքտէ իգթիզա իտէր իսէ պրկու ուսուլի իլէ սու գուլուսը աշըլըր, պինալարա ալա զարար վէ նէմ. իք վէրմէլ : Պու գուլուսարա գալվէթլի վէ տայանըղը թուլունպալար գօյուլուպ, սէնլէրճէ պօղուլմագսըղըն իսթիմալ օլընըլար : Սու չէքմէք բէք գօլալ օլուպ, իր վէ գօֆա իգթիզա իթմէլ :

Ֆիլաթլար գայէթ ուլիւն. թաֆսիլալը իզահաթ ալմագ իչիւն Տէմիրճի Հաճի Տիգրան Աւագեանըն տիւքեանընա միւրաճաթ իթմէլի : 8—10

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Յրդ. քաղ. քիւ 66.

Պարսկական հիւպատոսարանի դիւանը

Այս հաստատութիւնը, որ տարիէ մը ի վեր ձրիաբար գիւրքեր կը մատակարարէր ընթերցասէրներու, նոր գիրքերով ճոխացած կը շարունակէ բաց մնալ :

Ամէն երկուշաբթի և կիրակի ժամը 1—5 արանց և կանանց համար. իսկ հինգշաբթի կէս օրէ ետքը, միմիայն կանանց համար :

Отговорникъ М. Сконовъ
Печатня «Взаимность» — Варна